ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՇՈՒԼԱՎԵՐԻՑ

Ինչպէս Մեծ-Շուլաւերի անուանները պատկանում են զանազան իշխաններին՝ նոյնպէս և բոլոր արելահողերը պատկանում են մասամբ այդ անուանաւոր իշխաններին, իսկ միւս բոլորը երկու հայազգի ազնուական տան-Քալանթարեանցներին *) Մէլիք-Սարգսեանցներին։ Առաջինները աւելի մեծ ազդեցութիւն են անում գիւղի վերայ քան երկրորդները, բայց կարելի է ասել, որ թէև փոքր մասնակցութիւն աչքով են նայում գիւղացիների վերայ, բայց մինչև այս օր ոչ մի առանձին օգուտ չեն տուել նորանց, ոչ մի բանում չեն կամեցել գիւղի հոգ մի չահաւետութեանը մասնակից լինել, մինչև այս օր նորանցից ոչ մինը ձայն չէ հանել գիւղի առաջադիմութեան համար։ Սորանք ստանում են բաժանորդ (1/10 մասը վարելահողերի արդիւնքի) գիւղացիներից։ Մեծ-Շուլաւրեցիները վարում են նոյն գիւղում մինչև 4000 օրավար միայն, այդ տարեկէ չը բաւականանալով մի այդքան էլ վարում են շրջակայ գիւղերում, առաւելապէս Բորչալուում։ Առ հասարակ Մեծ-Շուլաւէրի հողը շատ լաւերի է և մինը միջին թուով տալիս է տասը սանդ ջրի տեղում, իսկ ջրովի տեղում ոչ պակաս քան 15 (1 թաղար ցանելով մի օրավարում) տացվում է 15 թաղար ցորէն։ Ցորենը ընտիր տեսակից է և կան մի քանի տեսակներ անուններով սիպտակ—զարդայ (շատ սպիտակ հատիկներով), դէղնէզարդայ (դեղնաւուն) կարմիր զարդայ կարմրուն և գարնանի (թխաւուն և շատ փափուկ գարնան ցանածը)։ Ցեղին հացը գեղացնցվում է իր բաւականի համեղութիւնով և սպիտակութիւնով, բայց փոքր փչրաւուն։ Թիֆլիզում ծախվում է 10—20 կոպէկով աւելի քան Վէքսանդրապօլինը։ Մեծ-Շուլաւրցիները վարելով թէ նոյն գիւղում և թէ դուրսը մինչև 800 օրավար հող երկու տարուայ մէջ չէ բաւականանում նորանց, համեմատելով նորանց աշխատութեան հետ, և աւելի հաւատի կը լինի եթէ հաստատենք մի քանի գիւղացիների հաստատութեանը, թէ՝ Մեծ-Շուլաւէրը այժմ հասանելիս կը լինի մինչև 700 տան, թէև Կամերալիայում յայտնուած է մինչև 400 տուն։ Այդ հողի քչութեան պատճառաւ է որ խեղճ գիւղացիները, երկու լուծ եզն ու գոմէշ ունենալով մինչև 30 վերստ հեռաւորութեամբ տեղ վար անելու, գողանալ են տալիս նամանաւոր հարուստներով, կամ հիւանդացուում են տնեղով այն տեղի վնասակար ջրի պատճառաւ։ Վարում են հողը գարնամուտին հին տեսակ գութանով, լծած ոչ պակաս քան 7 լուծ եզն ու գոմէշ, իսկ նորան բանեցնողները մինչև 10 հոգի, այս բոլորը միասին հաղիւ կարողանում են մի օրում վարել մի օրավար։ Մի և նոյն հողը վարում են երկու տարէնը մի անգամ, գուռանով վարածը, որին ասում են ցել՝ թողնում են մինչև աշնանը, այդ ժամանակը կրկին վարում են գութով մի լծանի, յետոյ արդէն ցանում։ Ցանելուց յետոյ հատիկները ծածկելու համար, կամ ինչպէս ասում են, ցաքելու համար գործ են ածում գաքան, անցկացնելով նորան եզներով հողի վերայ։ Գաքանը գործում են ճկուն ծառերի ճիւղերից կլորից նեղ տախտակի չափ, իսկ գործած ճիւղերի ծայրերը թողած արձակ։ Ցանելուց յետոյ գիւղացին թողնում է նորան անհոգ և երկնքի ամպերին է ողորմութիւն խնդրում, իսկ եթէ մի փոքր ջուր է ճանկում, աշխատում է շուտով հենց ցանելուց յետոյ ջրել, կամ թէ չէ գարնան ջրերին սպասում։ Ցանելիին արդէն սկսվում է հունձը։ Դրանում են այստեղ Հին-Նախիջևանցի կամ Վանցի մշակներ մանգաղները և մանոցները ձեռքերին **) հնձելու համար նորանք վարձվում են այստեղ 50—60 կ. օական, ի հարկէ գիւղական ամենամատ բացի հացը։ Բայց մեր Շուլաւրեցիները այնքան էլ չեն կարօտվում նորանց հնձին, որքան ուրիշ տեղացիները, նորանց գրիչնը եռ է գալիս երբ տեսնում են արաբ գարդի հասակի չափ ծուլի նման քամից ալեկոծվում է, ընկնում է մէջ այս ծայրից և խուրձը հաւաքած ձեռումը այն ծայրին։ Վերջացաւ հունձը՝ իսկոյն կրումեն խուրձը մեծ օրանի ասուած սայլերով և ապա կասում են կամերով, որը հատ տախտակ է մանր կոշտ քարեր ամրացրած միւս երեսի վերայ, դորան քարշ են տալի ձիաները կամ աւելի եզները կալի մէջ փռուած հասկերի վերայ։ Այսպէս կամով կասում են, հորսիլով (5 ճիւղանի թիակ) և թիակով եղումեն (ջարդած հասկերը շուռ են տալիս), եզանով (երկու ճիւղանի կոր ցցերով է վերջանում) խուրձը վերցնում են, նոյնպէս հորսիլով յարդը ցորենից քամուն տալով բաժանում, մղանով յարդը մղում են և ածում մարաքը և այլն։ Կան այստեղ այնպիսի մարդեր, որոնք հացի մշակութեամբ ազատուել են իրենց հայրական մեծ տոկոսով պարտքից և մի և նոյն ժամանակը ապահովացրել են իրենց նիւթական վիճակը ու աւելի մեծ տոկոսներով սկսել են փող փոխ տալ իրենց առաջուայ պէս աղքատ գիւղացուն, որը նորանց պէս հարուստ է եղել, բայց սորանց հարստութիւնը ընկել են մի ուրիշի ձեռքը։ «Աչխարհքս սանդուղք է» ասում է ժողովրդական առածը, մինը բարձրանում է միւսը իջնում է, և այս հենց իսկ նորանց պատկերն է. առ հասարակ մեր գիւղացիներից մինը հարստանում է միւսը աղքատանում. երկուսը ի միասին հարստանալ դժուար է լինում նամանաւանդ այստեղ։ Եթէ այսօր մէկը հաց ծախելով մի քանի կօպէկ է ժողովել՝ աշխատում է բաժանել խեղճ գիւղացիներին մեծ տոկոսներով ու ինքը չարաչարում է հանգստութեամբ իր երկրագործութիւնը նոյն ձեով, ինչով արել են իր պապերը. ոչ աւելցնում է և ոչ (եթէ կարողանում է միայն) պակասեցնում։ Գործնականութեամբ փող յետ դարձնողները իսկոյն պարապում են գինեվաճառութեամբ (չիրաչութեամբ) և մասամբ մանրավաճառութեամբ, նա եթէ ունէ մեծ այգի իր գինու հետ միասին ծախում է աղքատ գիւղացիների գինին, գինու նայլ (այսինքն չերայ ժամանակը գնում է գիւղացիներից 40—50 կոպէկով) պահում է գինի է շինում ու ծախում է Թիֆլիզում 1 ռ—50 կ. շատ անգամ Մեծ-Շուլաւրում ծախում են քիչ պակասով նոյն գինից։ Ընայելով այսքան բերքերի առատութեանը և ժողովրդի աշխատութեանը, դարձեալ աղքատ են գիւղացիք։ մի տարի եթէ փոքր պակաս է լինում բերքը գիւղացին իսկոյն թաղվում է պարտքի անդունդքում, նամանաւանդ այս տարի, շատ թշուառ վիճակի մէջ է Մեծ Շուլաւէրը։ Եթէ մարտը այգիները չլինէին անշուշտ սով կընկնէր այստեղ։ 30—40 օրավար ցորէն ցանողը սերմացու գոնէ չվերցրեց հիւ մնաց 2—4 օրավար ցանող խեղճը։ Այս տարի թէև 1000 թունդի տուող այգին տուեց 500 թունդի, բայց անցեալ տարի որ չիրէն ծախվումէր 40—50 կոպէկով այս տարի ծախվում էր 60—70 կ.։ Անցաւ հինգ ամիս երբ բոլոր գինին անցել էր այն գինէվաճառների ձեռքը՝ նոյն գնից պակաս էր ծախվում ինչ գնով գինէվաճառները էին գնել, ուստի թէև մեր գիւղացի հարուստ գինէվաճառները վնասուեցան, բայց աղքատները չտուեցան։

Մինչև 700 խաղողի այգիներ շրջապատումեն Մեծ-Շուլաւէրը. մշակվում են ամենայն բերքերը ինչ որ կովկասի կլիմային են պատկանում, բայց գլխաւորապէս գերազանցվում է այստեղի խաղողը և գեղձը, որ աւելի բարձր գնով են ծախվում Թիֆլիզում, քան միւս գիւղացիներինը, բացի դորանից միւս ծառեղէնի մրգերը աւելի հասել են լինում քան Թիֆլիզինը։ Խաղողը բաժանվում է շատ տեսակների անուններով. հսկելուս, խանլուզ, կանանչկենի, ծակենի, բանդղրկենի, չամչկենի, չիրակենի, սաուսաչող, սպիտակ խաղողներ են։ Իսկ սև խաղողներից սարի, սափրով, լակ և այլն։ Այդի մշակելը այստեղ բաւականի դժուարութեամբ է լինում, պատճառն է տեղիս ջրի պակասութիւնը, որովհետև մադը այսինքն հատ ճիւղը խաղողենու, որ կամենում են թաղել խաղողենի տնկելու համար, թաղում են մինչև երկու արշին խորութեամբ տեղում, նոյնպէս և ամէն տեսակ ծառեղէնը։ Նոր գցած մատը խաղող է տալիս աւելի մեծ ողկոյզներով (ճիւթ) 3 տարիից յետոյ, եթէ առատութեամբ ջրեն, իսկ մի քանի տարիից յետոյ երբ նոր խաղողենին ունենում է զօրեղ ճիւղեր՝ նորան այսպէս ասում են քցան են անում. այսինքն նորա ճիւղերը այս կողմ այն կողմում թաղում են մինչև երկու արշին խորութեամբ և այդպէս բազմացնում են նորանց թիւը. գալոց տարին սա արդէն լաւ խաղող է տալիս։ Ինչպէս աշնան կամ գարնան ժամանակը, որ գիւղացին կտրատուած անպէտ ճիւղերը խաղողենու՝ նոյնպէս և յետամում է լինում նորա բուսած ճիւղերից, որին ասում են չուշ, անզօրները կտրել, իսկ խաղողի հասած ժամանակը, եթէ տարին երաշտ չէ լինում բաց է անում խաղողը տերևները կտրելով, կիզող արեւգակի սակ, այդ ժամանակ, դեղնում է տպիտակ խաղողը որպէս դեղին սաթ։ Աշնանը որ արդէն բոլորովին հասած է լինում քաղում են սպիտակը ոչ առանձին, ածում են հնձանը, որը կուրիքական ձեով կրով ու աւազով պատած ու սրած պատերով են շինած, և պատի մի կողմում չիրէն անցնելու ծակն է շինած որով թափվում է ամանները, իսկ մզում են խաղողը նորան ոտնակոխ անելով։ Շիրէն, նոր գինին երկու կամ երեք օրից յետոյ, եր ածում են նորա մէջ գինու մզուածքը (ճաճէն), սկսում է եփ գալ, այդ ժամանակը սկսում են տեղքերով կամ փայտերով խառնել, անցնում է 8—10 օր չիրէն սկսվում է դառնանալ, իսկ եթէ լաւ չիրա է լինում աւելի ուշ մինչև 15 օր։ Երբ բոլորովին գինի է դառնում, ծեփում են կարսի բերանը ցեխով և այդպէս պահում, իսկ աւելցուկ մզուածքը, որ լինում է նորա կիսի չափ. որը խառնել են գինու հետ՝ պահում են առանձին ամանում վրէն ջուր աւելացնելով և քարեր դարսելով վրէն, այս ժամանակներում մինչև գինիից մզուածքը հանելը, որին ասում են կրտել, շաբաթ մի անգամ բանում են ամանի բերանը և տրորում։ Երկու ամսից յետոյ խտանում են բոլորովին գինին, հանումեն մզուածքը և օղի քաշում։ Մզուածքը ածում են մի մեծ կաթսայի մէջ, մի ուրիշ կաթսայի նմանը էլ որ ունէ խողովակ դընում են նորա վերայ շուր տուած. այդ խողովակը մտնում է ջրի մէջ և ջրի միջով անցնում ու գընում է այնտեղ, որտեղ պէտք է թափուի օղին. կաթսայի վրայի դրած կաթսայի նման խուփը լաւ ամրացնում են մեծ կաթսայի վերայ և ծակերը ցեխով խանում, մզուածքի վրէն աւելացնում են ջուր ու յետոյ թեժ կրակ վառում։ Փոքր ժամանակից յետոյ երբ եփ է գալիս, գոլորշին անցնելով ջրի միջով անցնող խողովակի միջով, կաթիլներ է դառնում և թափվում է ներքև ամանի մէջ։ Այս առաջին անգամի քաշին օղի ածնուն չեն տալիս, նորան ասում են սայլաս, նա շատ թոյլ է լինում, բայց երբ կրկին քաշում են այն ժամանակը ստացվում է իսկ օղին և կոչում են նորան ծծնաքար։ 1000 թունդի գինու մզուածքից ստացվում է մինչև 60 թունդի օղի միջին թուով։ Բացի այն, որ վարում են խաղողիներու տակը, ածում են նորանց տակը և ալր (փէյին) այս փէյինը մեծ օգուտ է տալիս խաղողենուն, պարարտացնում է նորա ճիւղերը, նոյնպէս պարարտացնում է ու աւելացնում է նորա ողկոյզները, գործել իր ազնիւ ցանկութիւնը,—թողից յոգուտ աւանդարանների 1000 ռուբլի փող։ Բացի սորանից ընծայեց 1000 ռուբլի եկեղեցեաց համար։

* *

Հինգշաբթի օրը ապրիլի 19-ին Թիֆլիսի ազգային թատրոնում հայ օրիորդներ, տիկնայք և երիտասարդներ ներկայացրին պ. Սանդուկեանցի «Քանդած օջախ» նոր կոմեդիան։ Առաջին անգամն է, որ հասարակութեան այն մասը, որ մինչև այժմ կարծես անտարբեր էր մնում մեր բոլոր գաղափարներին և զգացմունքներին,—մեր կանանց սեռը,—առաջին անգամ հրապարակապէս մեծ թատրոնում է դուրս գալիս իր մայրենի բարբառով.... և ինչ ենք տեսնում.... հայ կինը ու աղջիկը թէ իրանց մաքուր արտասանութեամբ, թէ կենդանի և բնական խաղով, գերազանցումեն երիտասարդ տղամարդիկներից...

Չենք կարող չը յիշել և այն ուրախալի երևոյթը, որ հայ երիտասարդների թիւում մասնակցում էր և մի վրացի երիտասարդ։

* *

Моск. Вѣд. լրագիրը հաղորդում է որ Կովկասեան գլխաւոր կառավարութիւնը ներկայացումն է առել համարել Թիֆլիսի քաղաքային ընտրութիւնները ներգործական, մինչև քաղաքային նոր կանոնադրութեան մացնելը։

* *

Մենք ստացանք պ. Անտոն Մէլիք-Դաղայեանցից մի յօդուած, որ է պատասխան «Մեղու Հայաստանի» լրագրի յօդվածին։—Նիւթերով խեղդված լինելով, ստիպուած ենք յետ դցել յիշեալ յօդվածը։

* *

Ալէքսանդրապօլից գրում է մեզ պ. Գ. Ղասապեանցը, որ «Մեղու Հայաստանի» լրագրում (№ 7) նոյն քաղաքից հաղորդած տեղեկութիւնները սխալ են՝ պ. Տէր-Գաբրիելեանցը հաղորդել է յիշեալ լրագրին թէ 5000 տուն հայ-լուսաւորչական են, նոյն թուում 200 տուն հայ-կաթոլիկ, յոյներ՝ 200 տուն և տաճիկներ 100 տուն։ Իսկ մեր թղթակիցը ասում է թէ հայ-լուսաւորչականները՝ 3900 տուն են, կաթոլիկ 40 իգ պակաս, յոյները 60 տուն և տաճիկները 30 տուն։

* *

Վիէննայի աշխարհահանդէսից «Մշակ» լրագիրը կուտենայ երկու թղթակից՝ մին պ. Բ. Թ., որի նամակը տպվում է այս համարում, և երկրորդ՝ պ. Ա. Վարդապետրիկեանցը։

* *

Ալէքսանդրապօլից գրում են մեր լրագրին որ այդ քաղաքում ընթերցասիրութիւնը հետզհետէ յառաջանում է և լրագիր կարդալը սովորութիւն է դառնում։ Հայ-պարբերական հրատարակութիւնը ստացվում են այստեղ հետևեալ թուով։ «Արարատ» 52 օրինակ, «Մշակ» 45 օրինակ, «Մեղու Հայաստանի» 30 օրինակ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Ապրիլի 18-ին, երեկոյեան 9 ժամին Միւնխէնում վախճանվեցաւ Երևելի Գերմանացի պրոֆէսօր՝ քիմիքոս բարոն Ֆոն-Լիբիխ։ Դիտաւորութիւն կայ Միւնխէնում արձան կանգնեցնել Երևելի գիտնականին։

Իւստուս Լիբիխը ծնաւ մայիսի 12-ին 1803 թուին Դարմշտադ քաղաքում։ Գիմնազիայում ուսումը աւարտելուց յետոյ, նա մօտ մի տարի աշակերտ էր իր քաղաքի դեղատան (ապտեկա) մէջ։ Մեծ հակումն ունենալով դէպի քիմիա, նա մտաւ Բոնների համալսարանը, 1819 թուին։ 1826 թուին նա արդէն պրոֆէսօր էր Գիսէն քաղաքի համալսարանում, որտեղ և մնաց 25 տարի։ Լիբիխի գործունէութիւնը տուեց մի նոր զարկ քիմիային և այդ գիտութեան վրա առանձին ուշադրութիւն դարձրեց։ 1852 թուին Լիբիխը դառնում է Միւնխէնի պրոֆէսօր, իսկ 1860 թուին նախագահ գիտութեան ակադէմիայի Բավարիայում։

Լիբիխի գործունէութիւնը յայտնի է ոչ թէ միայն լոկ գիտնական, այլ և գործնական գիտութիւնից, որը ճշմարիտ մարդասիրական նշա-